ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/44

«19» Ապրիլի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

« Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ավագանու 2017թվականի ապրիլի 14-ի թիվ 07-Ա և 08-Ա որոշումները:

Առդիր 4 թերթ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե ի. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » Ապրիլի 2017 թվականի N 07-Ա

## ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝

Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2017թվականի ապրիլի 14-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Ձորագետ համայնքի ավագանու 2017թվականի ապրիլի 14-ի նիստի:

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2017թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ
ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թ. ապրիլի 14
ի. Ձորագետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » Ապրիլի 2017 թվականի N 08-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի , 1-ին կետով, «Բյուջետային Համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով՝ Ձորագետ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Ընդունել ի գիտություն Ձորագետ համայնքի 2017թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Ձորագետ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի :

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թ. ապրիլի 14
հ. Ձորագետ

Հավելված

Զորագետ համայնքի ավագանու

«14» ապրիլի 2017թ. N 08-Ն որոշման

# ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Զորագետ համայնքի 2017թվականի բյուջեի առաջին եռամսյակը կատարվել է.

ա) եկամուտների գծով 105,0 տոկոսով, նախատեսված 1383.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1452.4 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ եկամուտները պակաս է կատարվել 176,4 հազար դրամով կամ 89.2%-ով:

- Սեփական եկամուտները ( բացի տրանսվերտներից և պատվիրակված լիազորություններից) նախատեսված 455.6 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 525.0 հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարել է 115,2 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 228.2 հազար դրամով կամ կատարվել է 69.7%-ով:
- Պաշտոնական դրամաշնորհների գծով ( ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ ) նախատեսված 927.4 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 927.4 հազար դրամ , կամ կատարողականը կազմել է 100 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 52,4 հազար դրամ, կամ կատարվել է 106%-ով:
- Ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 137387 դրամ:

## 1. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

### 1. 1 ՀՈՂԻ ՀԱՐԿ

Հողի հարկի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 25.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 29.7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 118.8%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 1 դրամ կամ կատարվե լ է 96.8%-ով:

### 1. 2. ԳՈՒՅՔԱՀԱՐԿ
(փոխադրամիջոց և շինություն)

Գույքահարկի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 161.1 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 165.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 102.9%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 45.8 հազար դրամ կամ կատարվել է 78.4%-ով:

## 1. 3. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Տեղական տուրքերը 3 ամսվա համար նախատեսված 254.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 314.0 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 123.6 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 182.0 հազար դրամ կամ կատարվել է 63.3%-ով:

## 1 . 4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճար

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարը 3 ամսվա համար նախատեսված 15.5 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 15.5 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100 %: Նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 100%-ով:

## 2 . ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Վարչական բյուջեի ծախսերը 3 ամսվա համար նախատեսված 1383.0 հազար դրամի դիմաց կատարվել է 1335.9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 96,6%-ով:

Ըստ գործառնական դասակարգման և ծրագրերի ծախսերը կատարվել են հետևյալ կերպ

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 1335,9 հազար դրամ

## 3 . ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Ֆոնդային բյուջեով 3 ամսվա համար նախատեսված 137.3 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կատարվել է 137.2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99,9 %:

Որից՝

Շենքերի և շինությունների կառուցում 137.2 հազար դրամ

ՋՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ